

Չեմ գիտեր ինչո՞ւ խուսափեցաւ ճշդելէ, յստակ յայտնելէ իր գեղին, ծննդավայր գեղին (չէր կրնար քաղաքացի մը ըլլալ, այսպէս ուզեցի, առաջին իսկ ըրպէին, իմ ալ ծնունդիս, որ տեղի ունեցած է քաղաքի մը մէջ - ու մանկութիւնս ու պատանութիւնս - որոնք անցան գեղին մէջ, զիս յորինելով տարօրինակ գեղացի մը, մէջէն անցած քաղաքին - ու զարգացումիս (մարմնական) հանգիստութիւնները արդարացնել ջանալով իր վրայ: Քաղաքացի մը չէր կրնար ըլլալ սա երիտասարդը, հակառակ դիմագիծերուն նրբութեանը ու խօսուածքին ազնուականութեանը անհերքելի վկայութեան) իրական անունը, ուր միշտ յածեր է իմ յամեցուն հետաքրքրութիւնը ամէն նոր դէմքի առջեւ, հողին հետ հաղորդ ազդակներու դրութեան մը հաւատարիմ մինչեւ այսօր: Դէպի ծննդավայր ամէն հարցում, շեղում, անիկա միշտ դիմաւորեց վեհաշէտ:

-Կովկասից:

Ետեւէն կարճ ու վսեմ՝

-Պրծաւ գնաց, էլի:

Իր ծննդավայրը լռող ամէն գեղացիի յատուկ լակոնական խուսափումով մը: Տարիներ պիտի հարցնէի ես ինծի, թէ ինչո՞ւ այս տղան կ'ուզէի գեղէն: Գեղացի: Ինծի՛ պէս: Ինքնագնահատումի տարտամ ստուեր մը երբեմն լուծում մը ճարեց, բայց յիմար լուծում մը, տրուած ըլլալով խոր այն արհամարհանքը, զոր ես ունէի ինձմէ, այնքան կանուխ, իբրեւ մէկէ մը, որ դատապարտուած էր, իր երազներուն ներքեւ «քաշուելու վար», թուիչքի տեղ սողալու՝ կեանքի ճահիճին: Այսպէս է կեանքը:

«Կովկասից» ուրեմն:

Դժուար չէ մեր հայրենիքին լեռնածիր մէկ անուշիկ գեղը կամ Արաքսը եզերող բլուրի մը, գարգմանակի մը